



ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒԴԻ ԱՆԴԱՄ, ՊՐՈՖ.  
ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՀՈՐԵԼՅԱՆԸ

Փետրվարի 5-ին՝ կիրակի օրը, վեհարանի հանդիսությանը դահլիճում, ժամը 17-ին, վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո և հանդիսավոր իրադրության մեջ, նշվեց Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պրոֆ. Ա. Առաքելյանի ծննդյան ութսուն և գրական-մանկավարժական գործունեության վաթսունամյակը:

Նախագահության սեղանի շուրջը տեղ էին զբաղեցրել վեհափառ Հայրապետը, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու դործերի խորհրդի նախագահ Կ. Գալլաբյանը, հորելյար պրոֆ. Առաքել Առաքելյանը, տ. Հալկազուն արքեպիսկոպոսը, դոկտ. պրոֆ. Կ. Ղաֆազարյանը, դոկտ. պրոֆ. Մ. Հասրաբյանը, ճարտարապետ Մ. Մաղմանյանը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, «էջմիածին» ամսագրի և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ:

Հորելյանական հանդիսության բացումը կատարվում է ՀՍՍՀ պետական հիմնի նվազով:

Այնուհետև Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հալկազուն արքեպ. Աբրահամյանը,



Հանուն Մայր Աթոռ ս. էջմիածնի միաբանության և Գերագույն հոգևոր խորհրդի, հանդես է գալիս հետևյալ ճառով:

«Այսօր, ս. Էջմիածնի վեհարանի կամարներու տակ և վեհափառ Հայրապետի բարձր նախագահութեան ներքե, հավաքված ենք կատարելու սրտագին պարտականութիւն մը՝ նշելու համար Մայր Աթոռ ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի երիցագույն անդամ և բոլորի կողմէ սիրված պրոֆ. Առաքել Գևորգի Առաքելյանի ծննդյան ութսուն և զրական-մանկավարժական գործունեութեան վաթսուամյակը:

Հարգելի պրոֆեսորը ծնած է 1887 թ. հունվարի 1-ին, Լեւնային Ղարաբաղի Շուշի գավառի Խնածախ գյուղի մեջ, բարեպաշտ հայ ընտանիքի մը համեստ հարկին տակ: Իր նախնական կրթութիւնը ստացած է տեղի ծխական դպրոցի մեջ, և այնուհետև իր ուսումը շարունակած Շուշի քաղաքի թեմական դպրոցի մեջ՝ 1894—1899 թթ.:

Նույն թվականի սեպտեմբերին ընդունված է ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանը:

Այս շրջանին էր, որ ճեմարանին մեջ կդասախոսեին հայտնի հոգևարականներ, ինչպիսիք են՝ Գարեգին վրդ. Հովսեփյանց (ապա կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո), Կոմիտաս վարդապետ, Կարապետ վրդ. Մկրտչյան, և գիտնական մտավորականներ Կարապետ Կոստանյան, Հրաչյա Աճառյան, Մանուկ Աբեղյան, Ստեփան Մալխասյան և շատ ուրիշներ: Ահա այս միջավայրին մեջ եկավ իր ուսումը կատարելագործելու, իր գիտելիքները հարստացնելու դարաբաղցի ուսման ծարավի Առաքել պատանին, այստեղ ստանալով միաժամանակ ապագա ուսուցչական, մատենագրական, հասարակական գործունեութեան իր պատրաստութիւնը:

1907 թվականին փայտն հաջողութեամբ մը ավարտելն վերջ Գևորգյան ճեմարանը, խոստումնալից երիտասարդը մտավ կյանք՝ նվիրվելով ուսուցչական ասպարեզին:

Այնուհետև Առաքելյանին կհանդիպենք շարք մը հայկական կեդրոններու և գավառներու մեջ որպես ուսուցիչ և կրթական տեսուչ՝ նվիրված հայ մատաղ սերունդի ազգային և հայրենասիրական դաստիարակչական գործին:

Ուսուցչութեան հետ միասին և իր բազմազրաղ մանկավարժական գործունեութեան առընթեր Առաքելյանը ունեցած է նաև գրական, մատենագրական բեղուն գործունեութիւն:

Այստեղ ես կուզեի առանձնապես նշել պրոֆ. Առաքելյանի վաթսուամյա գործունեութեան մեջ անոր ծառայութիւնը մասնավորաբար 1944 թվականին մինչև այսօր Մայր Աթոռ ս. Էջմիածնին:

Հայ ժողովուրդի, հայ մշակութի հանդեպ անոր սերը զինքը բերին սուրբ Էջմիածին:

Առաքելյանը եղավ այն առաջին մտավորականներէն, որ իր ծառայութիւնը, աշխատակցութիւնը և գործակցութիւնը բերավ հայրապետական տեղակալ Գևորգ արքեպ. Չեղրեքչյանին՝ ընդունելով նաև Մայր Աթոռ ս. Էջմիածնի պաշտոնաթերթի՝ «Էջմիածին» ամսագրի խմբագրատեղի պատասխանատու պաշտոնը, զոր վարեց 1945-էն մինչև 1949 թվականը:

1945 թվականի հունիսին ս. Էջմիածնի մեջ գումարված ազգային-եկեղեցական ժողովը երբ կաթողիկոս կընտրեր Գևորգ Զ-ը, ծերունագրող հայրապետի մոտ կանգնած մտավորականներու հետ էր նաև պրոֆ. Առաքել Առաքելյանը, որ ձեռք-ձեռքի տված մեծ վարպետ Ամետիք Իսահակյանի, Ստեփան Մալխասյանի, Երվանդ Շահազիզի, Ստ. Կամսարանի, պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի և ուրիշներու հետ, դարձավ Հայոց Հայրապետի սրտամոտ խորհրդականներէն մեկը, նրա եկեղեցաշեն, հայրենանվեր գործունեութեան ճանապարհի վրա:

1945 թվականի նոյեմբերին, երբ կվերաբացվեր ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը, Առաքելյանը առաջիններէն մեկն էր, որ սիրահոգի կերպով հանձն առավ իր ծառայութիւնը բերել ճեմարանի ուսումնա-դաստիարակչական աշխատանքներուն՝ դասավանդելով գրաբար, ընդհանուր գրականութեան պատմութիւն, մինչև 1956 թվականը:

Խմբագրական, մանկավարժական աշխատանքներու կողքին Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսը պրոֆ. Առաքելյանին վստահեցավ նաև կարևոր առաքելութիւններ դնել արտասահման: 1946 թվականին նա մեկնեց Լիբանան՝ Մայր Աթոռի համար տպարանի վերաբերյալ աշխատանքներով: Ապա անկե անցավ Երուսաղէմ:

1952 թվականին, լուսահոգի տ. Գարեգին կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիո թաղման առթիվ, Առաքելյանը ներկայացուց Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

1955 թվականի հոկտեմբերին Էջմիածնի մեջ գումարված ազգային-եկեղեցական ժողովը, որ Ամենայն Հայոց Հայրապետ ընտրեց Վազգեն Ա-ը, հաջորդ մեկ նիստին մեջ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ ընտրեց պրոֆ. Առաքել Առաքելյանը, պարտականութիւն, զոր ան կկատարե մինչև այսօր սիրով և նվիրումով:

1956 թվականի փետրվարին պրոֆ. Առաքելյանը մաս կկազմեր նաև Վազգեն Հայրապետի այն շքախմբին, որը պիտի մասնակցեր ընտրութեան և օծման Կիլիկիո կաթողիկոսին: Վեհափառ Հայրապետի հետ ան անցավ Եզիպտոս, Փարիզ և վերադարձավ Էջմիածին:

Այսօր, այս ուրախ առիթով, մեր մտա-  
նումն ու գնահատութիւնը կուղղվին ավելի  
առանձին 25 տարիներու վրա մարդու մը կյան-  
քին, որ իր ծառայութիւնը չէ խնայած Մայր  
Աթոռ ս. էջմիածնին, «էջմիածին» ամսա-  
գրքին, հոգևոր ձեռնարանին, և այս վերջին 12  
տարիներուն ալ իրրև անդամ Գերագույն  
հոգևոր խորհրդի:

Արդարև, տարբեր ալ չէր կրնար ըլլալ պա-  
սագան մեկու մը համար, որ էջմիածնի մեջ  
պատացաւ իր բարձրագույն կրթութիւնը, որու  
միտքն ու հոգին կազմակերպվեցան հայոց  
պատմութեան շունչով և այս պատմական  
վայրին մեջ, գործունեութեան զսպանակը  
դարձաւ մեծ հայրենասեր պատմիչ՝ Առա-  
քել Գալթիժեցիի խոսքը. «Ի վերայ Աջոյն և  
Մ. էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ  
վայր»:

Այսօր էջմիածինը կգնահատե և գոհու-  
թեամբ կնշե իր մեկ համեստ զավակի ծա-  
ռայութիւնը:

Այս հիշատակութեան արժանի պահուստ,  
հանուն Մայր Աթոռ ս. էջմիածնի միաբանու-  
թեան, հանուն Գերագույն հոգևոր խորհրդի,  
Ջերմորեն կշնորհավորենք մեր սիրելի պրոֆ.  
Առաքել Առաքելյանը՝ անոր ծնդւան ութսուն  
և գրական-մանկավարժական գործունեու-  
թեան վաթսունամյակի բարեբաստիկ առի-  
թով: Կամոյթենք իրեն ավելի եռանդ, կա-  
ռարյալ առողջութիւն, հոգեկան անդորրու-  
թիւն՝ հոգուտ Մայր Աթոռ ս. էջմիածնի  
պայծառութեան:

Թող կեցցե՛ք միշտ մեր սիրելի հօրեկարը:  
Մանոթ և հարգված մտավորական և հո-  
րեկարի հայրենակից ու բարեկամ՝ պրոֆ.  
Մ. Հասարթեանին իր ողջույնի խոսքում ա-  
սաց.

«1967 թ. փետրվարի 7-ին, հունվարյան  
արձակուրդներից հետո, և. Արուվյանի ան-  
վան հայկական մանկավարժական ինստի-  
տուտի բանասիրական ֆակուլտետի լսա-  
րաններից մեկում, սովորականի նման, ամ-  
բիոն է բարձրանալու ոչ բարձրահասակ մի  
ասախոս, որին ուսանողները միշտ սպա-  
սել են անհամբերութեամբ: Նրանք մշտապես  
զգացել են իրենց սիրելի պրոֆեսորի երի-  
տասարդական եռանդը, դարմանալի հիշո-  
ղութիւնը, անսահման գիտելիքները երի-  
տասարդներին հաղորդելու վարպետութիւ-  
նը, քնկերական և հայրական ջերմութիւնը,  
սիրել նրա սրամիտ ասույթների փակագծե-  
րը: Եվ երբեք նրանց մտքովն իսկ չի անցնե-  
լու, որ այս անգամ պրոֆեսորի ամբիոն  
բարձրանալու ժամանակ նա բոլորել է ար-  
դեն իր ծննդւան 80-րդ տարին, և դասավան-  
դելու 60-րդ տարին է սկսում: Այդ բացառիկ  
զաղանիքներից մեկը ոչ այնքան այն է, որ

պրոֆեսորը երկարակյացների հռչակված  
երկրի՝ Ղարաբաղի զավակ է, այլ մեծապես  
այն շնորհակալ ու երախտաշատ աշխատան-  
քը, որ կոչվում է մանկավարժութիւն: Ամեն  
տարիների մշտական հանդիպումը դպրոցա-  
կան պատանիների և ուսանողների հետ, երի-  
տասարդական լիցք ու ավիշ է տալիս ուսուց-  
չին, որովհետև երիտասարդութիւնը հենց  
մարդկային հասարակութեան մշտական ե-  
ռուն կյանքն է: Մեղվաչան աշխատասիրու-  
թիւնը, համեստութիւնը, պարտաճանաչու-  
թեան զգացումը դարդարել և դարդարում է  
մեր վաստակած հոբելյարին, որը մեզ թե-  
լադրում է երախտագիտութեան ջերմ խոսք  
ասել այսօր, որքան էլ այդ անսովոր ու ան-  
ցանկալի լինի նրա համար: Նա չի հայցում  
այդ, այլ ստանում է իր կամբից անկախ,  
բոստ արժանւոյն:

Պրոֆեսոր Առաքելյանը ծնվել է 1887 թ.  
հունվարի 1-ին, շատ համեստ մի ընտանի-  
քում, Արցախ-Ղարաբաղի Ննածախ գյու-  
ղում: 17-րդ դարի վերջերին, թե 18-րդի  
սկզբներին սահմանակից Սյունիքի նշանա-  
վոր Ննածախ գյուղի բնակչութեան մի մասը  
հարկազրկված է լինում գաղթելու Ղարաբաղ:  
Գյուղում դպրոց չկար, և փոքրիկ Առաքելը  
իր գրաճանաչութիւնը, ինչպես ասում են՝  
նախնական կրթութիւնն ստանում է մոտա-  
կա Բալլուշա գյուղի ծխական դպրոցում, ա-  
պա, երկու տարի հետո, ընդունվում է Շու-  
շիի թեմական դպրոցը, իսկ երեք տարի հե-  
տո՝ փոխադրվում վարդաբլազատ՝ էջմիածնի  
Գևորգյան ձեռնարան:

1899—1907 թթ. սովորելով Գևորգյան ձե-  
մարանում, ուշիմ պատանի Առաքելյանը  
աշակերտում է հայ նշանավոր գիտնական-  
մանկավարժների և կապվում այդ տարիներին  
խլրտացող աշխարհին: Քաղաքական  
ազատագրական շարժման եռուն կյանքի մի  
շրջան էր ապրում մասնավորապես հայկա-  
կան իրականութիւնը: Բացառիկ վերելքի  
տարիներ էին նաև գիտութեան, արվեստի և  
գրականութեան մարդերում, միաժամանակ  
ծանր ոգորումների և կորուստների տարի-  
ներ: Ամեն մարդ, հատկապես աշխատավո-  
րական ընդերքից էլած մտավորականը, իր  
հասարակական դիրքն էր փնտրում, իրեն  
մատչելի զաղափարախոսութեան դրոշի ներ-  
քո: 1905—1907 թթ. ցնցեցին նաև ողջ Ռու-  
սաստանը, ներառյալ Կովկասը և արևելա-  
հայ իրականութիւնը: Այս ամենին անմասն  
չմնաց նաև երիտասարդ Առաքելյանը:

1907 թվականին ավարտելով ձեռնարանի  
լսարանները, Առաքելյանը նշանակվում է  
ուսուցիչ Իգդիրի դպրոցում: Մեկ տարի հետո  
հրավիրվում է իր հայրենի Ղարաբաղ՝ որպես  
դասատու Շուշիի հռչակված թեմական գրպ-

րոցում և Մարիամ-Ղուկասյան օրիորդաց գիմնազիայում: Ետևում նշանակվում է և գավառի դպրոցների վերատեսուչ, իսկ 1911—1913 թթ.՝ նաև Նուխիի շրջանի հայկական դպրոցների վերատեսուչ: Մանկավարժական իր աշխատանքը շարունակում է Ղարաբաղում մինչև 1926 թվականը, որից հետո 5—6 տարի աշխատում է որպես ուսուցիչ նաև Բաքվում: Որպես բարձրագույն ուսումնական հաստատության դասախոս նա աշխատում է Երևանում 1934 թվականից, անընդմեջ: Պրոֆ. Առաքելյանը դասախոս է եղել Երևանի պետական համալսարանում հեռակա մանկավարժական ինստիտուտում, իսկ վերջին տասնամյակներում՝ Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում:

Վեց տասնամյակների ընթացքում բազմաթիվ վայրերում, Իգդիրից մինչև Բաքու, տարած մանկավարժական աշխատանքին զուգընթաց, պրոֆ. Առաքել Առաքելյանը գործուն մասնակցություն է ունեցել նաև հասարակական կյանքի մարզերում:

1932 թվականին Ա. Առաքելյանը վերջնականապես փոխադրվում է Երևան: Այս ժամանակից էլ սկսվում է մեր հոբելյարի իսկական, անընդմեջ գիտական աշխատանքի շրջանը, որը շարունակվում է մինչև այսօր, երբ արդեն բոլորել է 80 տարին՝ 60 տարվա աշխատանքային ստաժի հետ: Իսկ վաթսուն տարին, առանձին վերցրած, սովորաբար մեկ ամբողջ կյանք է համարվում, որի ընթացքում մարդ 40—45 տարի ապրում է իր ստեղծագործական շինարար տարիների շրջանը: Մինչդեռ լրիվ 60 տարիները 80-ամյա Առաքելյանի համար հանդիսացել են աշխատանքային շինիչ տարիներ, որոնք երիտասարդական եռանդով շարունակում է նա որպես մանկավարժ և գիտնական՝ ոչ մեկ օրը պարապի չտալով:

Եթե մանկավարժ Առաքելյանը սկսած 1906 թվականից թշնակցել է հայկական թերթերին, ապա 1931 թվականից մանկավարժությանը զուգահեռ սկսվում է նրա անընդմեջ գիտական աշխատանքի շրջանը, նախապես ուսերենից և գերմաներենից գիտական գրքերի թարգմանությամբ: Լինելով նաև գրաբարի և հին գրականության քաջ գիտակ դասախոս, 1937—1954 թվականներին Առաքելյանը լույս է ընծայում գրաբարի իր երեք ձեռնարկ-դասագրքերը և հունահռոմեական գրականության պատմության նույնպես երեք ձեռնարկները: Կատարում է և համառոտ ուսումնասիրություններ Անահիտ Շիրակացու, ինչպես նաև՝ Հին Հայաստանի կրթության և դաստիարակության մասին: 1942 թ. Առաքելյանը ստանում է բա-

նասիրական գիտությունների թեկնածու աստիճան, պաշտպանելով «Հունարան դպրոցը և հելլենաֆիլ հոսանքը Հին Հայաստանում» դիսերտացիոն թեման: 1954 թ. նա ստանում է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան՝ իր «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն» աշխատության համար, որը լույս տեսավ հինգ տարի հետո: 1955 թ. դեկտեմբերին ՀՍՄՀ Գերագույն սովետը պրոֆ. Առաքելյանին շնորհում է գիտության վաստակավոր գործչի կոչում:

Պրոֆ. Առաքելյանի տասնամյակների տքնաջան աշխատանքի արդյունքը և զուգագործոցը հանդիսանում է վերը նշված՝ «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն» եռահատոր աշխատանքը, որի, ավելի քան 100 մամուլ ծավալով, երկու հատորները լույս տեսան 1959 և 1964 թթ.՝ ընդգրկելով հայ հեթանոսական շրջանի 400 տարվա և քրիստոնեության շրջանի (ավատատիրության շրջան) 1500 տարվա պատմությունը: Վերջին՝ երրորդ հատորի վրա (18—20-րդ դդ.) հեղինակը շարունակում է իր մեղմաջան աշխատանքը:

Պրոֆ. Առաքելյանի այդ ծավալուն մենագրությունը բացառիկ ընդգրկում ունեցող մի գործ է, որ փոխարինում է համայնագիտական, մատչելի նաև մասսայական ընթերցողին: Իրավամբ, այդ սեղանին դնելիք գիրքը հայ մշակույթի և հայագիտության հանրագումարն է, որը մասնագետ ընթերցողին ուղղություն է տալիս, թե ի՞նչ է մնացել հայ մշակութային կյանքի բոլոր ասպարեզներում, ո՞րն է ուսումնասիրվել հայ կամ օտարազգի գիտնականների կողմից, և ինչպեսի գնահատականի ու եզրակացության արժանացել: Սակայն մեր հերինակը շատերի նման հանդես չի գալիս որպես սոսկ արձանագրող, այլ իր վերաբերմունքն է ցուցաբերում և այդ կարծիքների եզրակացությունների իր գնահատականը տալիս: Պատկերացնել պետք է, թե որպիսի կամք է ցուցաբերել հեղինակը տասնյակ տարիների այդ ահռելի աշխատանքի մեջ՝ կարդալով ոչ միայն հին ու նոր բոլոր հայ հեղինակների, մատենագիրների, գրողների, գիտնականների, այլև օտար հեղինակների հարյուրավոր երկերն ու բանասիրական հոգվածները նրանց մասին: Օրինակ, միայն հայ գրերի գյուտին և առաջին թարգմանություններին նվիրված են գրքի 90 էջերը (163—253), օգտագործելով ավելի քան 60 աղբյուր, գրեթե այն ամենը, ինչ լույս է տեսել այդ հարցերի մասին մինչև գիրքն ավարտելը: Այստեղ էլ կգտնեք իր՝ հեղինակի կարծիքները և ակտիվ

գիտական վերաբերմունքը: Հեղինակի ելրակացութիւնները մեկ մասին, իրավացի կամ ոչ իրավացի, կարող ենք առարկել, բայց դա ինքնին հավելյալ դրդապատճառ է դառնում ճշմարտութեանը հասնելու:

Ողջ աշխատութեան մեջ կարմիր թելով անցնում է հեղինակի այն զխաւոր նպատակներից մեկը, որ հայ մշակույթի զարգացումն ընթացել է ինքնուրույն ուղիով և ոչ թե ուրիշ ժողովուրդների մշակույթների կրավորական ընկալման ուղիով: Գոյութուն ունեցած և տակալին ունեցող հայ և օտար հեղինակների նման հոռի և անարդար կարծիքները ժխտելու զայրույթը հեղինակին երբեմն մղում է շափազանցութեան, կասկածի տակ անենելու կամ նույնիսկ ժխտելու նաև որոշ անվիճելի փաստեր, բայց դրանք բնավ չեն նսեմացնում այդ գործի արժեքը:

Յանկանք, որ 80-րդ տարին բոլորած հոբելյարը իր համեստարք և անաղմուկ ձևով վաստակած կյանքի մնացած տարիներին ևս մնա գիտութեան պատանելի վրա՝ առողջ մարմնով, արթուն մտքով և ցարդ պահպանած երիտասարդական եռանդով:

Հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես Ժ. վրդ. Պոզապալյանը, հանուն ճեմարանի տեսչութեան, դասախոսական կազմի և ուսանողութեան ողջունելով հոբելյարին, ողջունի իր խոսքի մեջ ասաց.

«Սրբանիկ մի առիթ է մեզ բոլորս հավաքել վեհարանի այս հանդիսութեանց դահլիճը՝ Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ տոնախմբելու պրոֆ. - դոկտ. Ա. Առաքելյանի ծննդյան ութսուն, գրական-մանկավարժական գործունեութեան վաթսուն և Մայր Աթոռում նրա ծառայութեան քսանհինգամյակի հոբելյանական տարիները:

Ինձ համար, որպէս տեսուչ հոգևոր ճեմարանի, շատ քաղցր պարտականութիւն է շնորհավորել հարգելի հոբելյարը՝ դասախոսական կազմի, հին ու նոր սաների և իմ անունից:

Պրոֆ. Առաքելյանը սովորել է ս. էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ժամանակի Հայաստանի բարձրագույն ուսումնական կրթարանում, Խրիմյան Հայրիկի հայրենասիրական շնչին տակ: Իր հայրենասիրութեանը պրոֆեսորը ստացել է ճեմարանում, և իր հետագա կյանքը, հայ ժողովրդի սիրուն զոհելու ոգին՝ մեր եռամեծ ուսուցիչներից:

Թեպետ երկար տարիներ գործի և պաշտոնների բերմամբ հեռու է ապրել Մայր Աթոռից մեր հոբելյարը, սակայն երբ Մայր Աթոռը կարիքն ունեցել է նրա ծառայութեան, պրոֆ. Առաքելյանը հրեք չի զլացել իր աշխատակցութեանը:

Նա եղել է «էջմիածին» ամսագրի խմբագիր, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, ինչպէս նաև երկար տարիներ դասախոսել է հոգևոր ճեմարանում:

Հոգևոր ճեմարանի հին ու նոր սաները քաջ գիտեն, որ մեր հոբելյարը որքան սիրով է կապված այդ հաստատութեան հետ: Մինչև այժմ էլ հարգելի հոբելյարը հաճախ այցելում է ճեմարան, ներկա է լինում դասերին և ըննութիւններին, հրճվում ուսանողական հանդիսութիւնների ընթացքում՝ վերհիշելով ուսանողական իր տարիները նույն հարկի տակ:

Յավում էմ, որ հոգևոր ճեմարանի հարկի տակ հարգելի հոբելյարին աշակերտելու պատիվը չեմ վայելել:

Սակայն այժմ ես ինձ աշակերտ եմ համարում, որովհետև իր արտասահմանյան ուղևորութիւնների ժամանակ (1946, 1952 և 1956 թվականներին) լսել եմ նրա դասախոսութիւնները, նախ որպէս պատանի և հետո որպէս ուսանող Անթիլիասի դպրեվանքի: Թերևս հայրենասիրութիւն կերտողներից մեկն էլ նա՛ է եղել: Եվ վաստահար պատճառ է հանդիսացել, որ տեսպէս կյանքս կապեմ Մայր Աթոռին՝ իմ ներսիրդի կոչման ձայնը առավել զորացնելով:

Թող տարիների բեռը չճանաչանա իր վրա: Թող իր գրիչը ձմեռ չունենա, միշտ երիտասարդ, միշտ առույգ տեսնենք նրան Վեհափառ Հայրապետի կողքին, Մայր Աթոռի կամարների տակ:

Կեցցե՛ք մեր հոբելյարը: Հանուն «էջմիածին» ամսագրի ողջունի խոսք ասաց պատմական գիտութիւնների թեկնածու, Մայր Աթոռի պաշտոնաթերթի խմբագրական կազմի անդամ Ս. Քոլալեչյանը.

«Ամենայն Հայոց Հայրապետութեան պաշտոնաթերթ «էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի անունից թույլ տվեք ի սրտե շնորհավորել Ձեզ, Ձեր ծննդյան ութսուն և գրական-մանկավարժական գործունեութեան վաթսունամյակի առիթով:

Ձեր բազմաբովանդակ կյանքը հայ ժողովրդին և նրա հինավուրց մշակութիւն շերտնեռնողորեն նվիրվելու բացառիկ օրինակ է հանդիսացել: Ձեր հարուստ կյանքի կարևոր մի մասը Դուք անց եք կացրել նաև ս. էջմիածնի կամարների ներքո և Ձեզ անբակտեիորեն միաձուլել Մայր Աթոռի վերջին շրջանի քառորդարջա գործունեութեան հետ: Այս սրբազան հարկի տակ, ի շարս Ձեր ստանձնած հայրենանվեր և եկեղեցաշեն պատասխանատու աշխատանքների, Ձեզ է պատկանում նաև Ամենայն Հայոց Հայրապետութեան պաշտոնաթերթ «էջմիածին»

հանդեսի առաջին խմբագիրներից մեկը լինելու բարձր պատիվը:

Հայրենական մեծ պատերազմի օրերին էր, երբ հայրենի հարազատ պետության հովանու տակ գտնվող հայ եկեղեցիին սկսել էր թևակոխել իր նոր զարթոնքի շրջանը, անհրաժեշտություն էր առաջացել Մայր Աթոռն օժտելու հատուկ պաշտոնաթերթով, և որը պետք է հանդիսանար նախկինում հրատարակված «Արարատ» ամսագրի շարունակությունը: Վերջինս, ինչպես հայտնի է, լույս էր տեսել 1868—1919 թթ., և իր կեսդարյա պատմության ընթացքում պատվավոր տեղ գրավել ոչ միայն եկեղեցական պարբերականների շարքում, այլև նշանակալից դեր ստանձնել նաև հայագիտության զարգացման գործում: Նոր հրատարակելի ամսագիրը, շարունակելով հանդերձ իր նախորդի ավանդույթները, պետք է ստանձներ նաև նորանոր այլ պարտավորություններ, որոնք անմիջականորեն բխում էին ժամանակի պահանջներից:

Հայրապետական նոր հանդեսի խմբագիրը լինելու պատիվը նաև վստահվեց Գևորգյան ճեմարանի երբեմնի սան, բազմարդյուն մանկավարժ և գիտնական պրոֆ. Առաքել Գևորգի Առաքելյանին՝ մեր այսօրվա թանկագին հոբելյարին: Նա էր, որ 1944—1949 թթ. ամենայն ձեռնհասություններ և մեծ եռանդով խմբագրեց այն և «էջմիածին»-ը վերածեց մի տեսակ ոսկյա կամուրջի՝ կրկին հաղորդակից դարձնելով աշխարհով մեկ սփռված մեր եղբայրներին և քույրերին՝ հարազատ հայրենիքի և ս. էջմիածնի հետ: Հիշյալ տարիներին հրատարակված ամսագրի համարների հետ համառոտակի ծանոթացումն իսկ կարող է վկայել ձեռք բերված հաջողություն մասին: Այս առթիվ անհրաժեշտ է նշել, որ այդ տարիներին «էջմիածին» ամսագրի մնայուն աշխատակիցների թվումն էին գտնվում մեր մեծանուն վարպետը՝ Ավետիք Իսահակյանը, հայագիտության երախտավորներից ակադեմիկոսներ Ստ. Մալխասյանցը և Հրաչյա Աճառյանը, գիտության մաստակավոր գործիչներ Երվանդ Շահազիզն ու Գարեգին Լեոնյանը, և շատ ուրիշներ: Ամսագրի շուրջ ստեղծված ընդհանուր ոգևորությունը նրա շուրջը համախմբեց նաև սփյուռքում գործող բազմաթիվ հայտնի գիտնականների, այդ թվում՝ հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավոր Գարեգին Ա. կաթողիկոս Հովսեփյանցին, անվանի պատմաբան Ա. Ալպոյաճյանին, ժրագյան բանասեր Արտ. արքեպ. Մյուրմեյանին և ուրիշներին:

Ամսագիրը լայն տեղ տրամադրեց նաև հայ հայրենիքի և Մայր Աթոռի առօրյա

կյանքին և վերածաղկմանը:

Թանկագին հոբելյար, Դուր խմբագրական ասպարեզ իջնելով միանգամայն երջանիկ պայմաններում, կարողացաք հայրապետական ամսագիրը մի տեսակ կոունկի վերածելով մեր հույսի և լույսի կենտրոններից լավագույն խապրիկներ ուղարկել աստանդական հայության: Եթե անցյալի պայմանները թելադրում էին «Արարատ» ամսագրի խմբագրերին գրելու հայրենի երկրի ամառային և աշխարհով մեկ հայության բեկորների տարածման և նրանց սպառնացող սովի ու համաճարակի մասին, ապա «Դուր զարծյալ երջանկությունը ունեցաք մեր պատմության մեջ իր նախընթացը շունեցող հայրենադարձության վսեմ լուրը ավետելու: Եվ, վերջապես, եթե «Արարատ»-ում գրվում էր մեր հոյակապ քաղաքների և հուշարձանների ավերման ու մոխրակույտերի վերածման մասին, ապա Ձեզ է, որ դարձյալ բախտ վիճակվեց արձագանքելու մեր հայրենիքում բարձրացող լույսի նոր տաճարների մասին և զովքը հյուսելու մեր քաղաքամայր հրաշք Երևանին, որպեսզի հայը ուր որ էլ լինի, պահպանի իր գոյությունը և շարունակի հայ մնալ...»

Ամենայն հայոց նորընտիր գահակալ՝ Ն. Ս. Օ. Տ. Վազգեն Ա Վեհափառ կաթողիկոսի գահակալության առաջին իսկ օրից Դուր միշտ մնացիք Մայր Աթոռի և նրա անձնվեր Հայրապետի շուրջը իբրև Գերագույն հոգևոր խորհրդի անդամ՝ Ձեր անունը ընդմիշտ կապելով հայ եկեղեցու նորագույն պատմության հետ:

Թանկագին ուսուցչապետ, երբ այսօր նշվում է Ձեր բազմարժանի կյանքի հոբելյանը, պարտականություն եմ զգում նաև իմ երախտագիտությունը հայտնել Ձեզ այն բանի համար, որ ես ևս մաս եմ կազմել Ձեր շնչին հաղորդակից եղող բազմահազար ուսանողների բանակին, որոնք այժմ մե՛ք հանրապետության, ինչպես նաև մեր մեծ Միության այլ հանրապետություններում կարևոր աշխատանքի են լծված:

Մեծարժեք հոբելյար և թանկագին ուսուցչապետ, թույլ տվեք այս հանդիսավոր պահին մի անգամ ևս «էջմիածին» ամսագրի խմբագրության և նրա բազմահազար ընթերցողների անունից հայտնել Ձեզ սրտագին շնորհակալություններ, ցանկալ Ձեզ երկար, առողջ և երջանիկ կյանք ու ստեղծագործական բեղմնավոր աշխատանք՝ ի փառս հայ մշակույթի և մեր մայր հայրենիքի ու ս. էջմիածնի: Թույլ տվեք նաև Ձեր ուսանողության և անձամբ իմ կողմից Ձեզ հայտնել խորին հարգանքներ և երախտագիտության ամենաջերմ զգացմունքներս:

Հոգևոր ճեմարանի զրարար լեզվի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Անթրոսյանը ջերմորեն ողջունում է հարգելի հոբելյարին հետևյալ ուղերձով.

«Մեծարգո հոբելյա՛ր, սիրելի՛ ուսուցչապետ, հայտնի խոսք է՝ տարիները խելացի մարդու իմաստությունն ավելացնում են: Երեք բան տարվա իմաստավորված ազգանվեր, բոլորանվեր կյանքի ճանապարհ եք անցել Դուք: Այսօր մենք առավել ուրախ ենք, որ Ձեզ տեսնում ենք քաջառողջ ու կայտառ, աշխատանքի սքանչազործ տրամադրություն մը առեցուն:

Մոտ երկու տասնյակ տարի առաջ Ձեր գործընկերներն ու ուսանողները Ձեզ գիտեին որպես հին աշխարհի հոգու ճարտարագետների անդուգական մասնագետ ու դասախոս, որն խորունկ սեր ու պաշտամունք ունենալով ամենայն գեղեցիկի հանդեպ, իր դասախոսություններում, ավանդական հարալեզների պես, կենդանություն էր տալիս մեր պատմահոր մեկուկես հազարամյա հնություն ունեցող այն խոսքին, թե «... ես չեմ տատանվում՝ ամբողջ Հունաստանը գիտություն մայր կամ դայակ կոչելու» (Մ. Խորենացի, Ա, Բ): Այո՛, մենք Ձեզանից սովորեցինք սիրել գեղեցիկը:

Այսօր Դուք հայ մտքի անդաստանում ծանոթ եք որպես հայրենի մշակույթի հմուտ մասնագետ: Ինչպիսի՛ զուգադիպություն. ինչպես մեր պատմահայրը, սքանչացած հին հույների մեծագործություններով, ստեղծեց իր, մերազնյա մատենից մատյանը, այնպես էլ Դուք, ճշմարտագույնս զնահատելով թրոգոմյան ազգի հոգեկան հարստությունները, հնարավորություն ընձեռեցիք, որ մեծագործ նախնիների հետևորդները կարգան, ծանոթանան, ոգևորվեն, որդեգրեն դրանք և յուրույանն հարստացնեն հայրենի մշակույթը:

Սիրելի ուսուցչապետ, մենք գիտենք, որ Դուք միշտ Ձեզ հոգեհարազատ եք զգացել աստվածակառույց այս հաստատությունը. բնական է, Ձեր հոգին սնունդ է առել Կեորգյան ճեմարանի համահայրույր կամարների ներքո, ինչպես բարի, երախտապարտ զավակ, Դուք երբեմն չեք մոռացել, ս. էջմիածինը, Գեորգյան ճեմարանը կամ նույնն է թե՛ հոգևոր ճեմարանը: Մեկ տասնամյակ ամբողջ այստեղ մեր լեզուն ու նրա շունչն են ավանդել հայորդիներին, և այսօր նրանք, թող թե՛ այլուր, իրենց համեստ լուման են ներդնում հայագիտության մեջ:

Մենք գիտենք, որ մեր ժողովրդի ծանր օրերում իսկ Դուք չեք կորցրել Ձեր հոգու արիությունը. գեղեցիկը պաշտելով, անտեղիտալի եք մնացել հավիտենական բարոյակա՛նի Ձեր պաշտամունքի մեջ:

Մենք գիտենք, որ մեր ժողովրդի հոգևոր արժեքների զնահատության, պահպանման հարցերում Դուք միշտ եղել եք արդար, համարձակ, ճշմարիտ ու հայրենասեր:

Դուք մեր վերածնված ժողովրդի առաջին ավետաբեր ծիծեռնակներից մեկը եղաք սփյուռքում. Ձեր բարի առաքելությունների ժամանակ ի մոտո ճանաչեցիք և անհունորեն սիրեցիք՝ հայրենակարոտ այդ տարագրեցիներին, որոնց կարոտից այսօր էլ Արաքսը «դարիվ-դարիվ խփելով փախչում է լալագին»: Դուք հուսադրեցիք նրանց, ոգևորեցիք, որ մայր Հայաստանը իր գիրկը կառնի նրանց, որպեսզի Գողթան անմահ երգիչները վերստին հնչեցնեն բամբուկները, երգելով թող մարգարիտ տեղա Արաքսի հարսնության ժամանակ:

Աստվածաշնչական ավանդությունների այս սուրբասուրբ երկրում մեկ ավանդություն էլ պետք է հորինվեր այն մասին, որ սպիտակափառ Մասիս սարը որպես թագ իջնում է իր արժանավոր հայորդիների գլխին: Համեմատությունները բանաստեղծական մտածելաձևի սեփականությունն են, բայց մենք հավատացած ենք, որ Մասիս սարն անձեռակերտ թագ է դնում Մեսրոպի ու Եղիշեի, Նարեկացու ու Մագիստրոսի, Կոմիտասի ու Անդրանիկի ճշմարտագնաց մայրուղիով ընթացող իր բոլոր որդիների գլխին: Անձեռակերտ այդ թագը թող զարդարի և Ձեր ալեհեր գլուխը:

Աշակերտի մշտաերախտապարտ հոգով ողջունում եմ Ձեզ, շնորհավորում Ձեր կյանքի, ես կասեի՝ մտավոր մշակույթի արգասաբեր տարիները, մաղթում քաջառողջություն ու գիտական, դասախոսական բեղմնավոր աշխատանք՝ ի բարգավաճումն հայրենի դպրության և ի փառավորումն ազգիս հայոց»:

Հոբելյարին ուղղված ողջունի սրտագին խոսքերից հետո, հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը ընթերցում է հանդիսության ընթացքում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի փետրվարի 5 թվակիր հետևյալ սրբատառ կոնդակը, որն ունկնդրվում է հոտնկայս.

«ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ՊՐՈՖ. ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ, ԱՆԴԱՄՈՅ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴՈՅ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴՒՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱՇՆԻ, ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հոգեկան անհուն ուրախությամբ կ'ողջունենք Ձեր ծննդյան ութսունամեակը և

գրական-մանկավարժական գործունեութեան վարժարանայ վաստակը, ու այս երջանիկ առթիւ, Մեր մեծարանքի ու գնահատանքի զգացումներուն հետ միասին, Ձեզի կը բերենք Մեր սրտագին մաղթանքը, որ նաև յետ պատու, երկար տարիներ շարունակէք Ձեր մտքի լոյսով և հոգիի ջերմութեամբ՝ դաստիարակել նոր սերունդներ, ի փաստ հայ մշակութիւն ու ժողովրդեան:

Այսօր, Մեզի համար մեծ ուրախութիւն է նաև հաստատել, որ Դուք, սիրելի ուսուցչապետ, քսան և հինգ տարիներ է ի վեր, Ձեր բեղուն աշխատանքի բաժինը նուիրաբերած էք սուրբ Էջմիածնին, իբրև անդամ Գերագոյն հոգևոր խորհուրդի, իբրև խմբագիր «Էջմիածին» մեր պաշտօնաթերթի, և իբրև դասախօս հոգևոր ճեմարանի, ամէն կերպի և միշտ թանկագին ծառայութիւններ մատուցելով Մայր Աթոռիս, ներշնչուած ու գօտեպնդուած Հայաստանեայց եկեղեցիի և հայ ժողովուրդի գերագոյն շահերու պայծառ գիտակցութեամբ:

Դուք, արժանատր ու երախտագէտ սան Գեորգեան հոգևոր ճեմարանի, Ձեր կեանքով ու գործով հանդիսացաք բարի և քաջ մշակ հայ դպրութեան անդաստանի մէջ, Մայր Աթոռ ու Էջմիածնի հանդէպ Ձեր պարտքը կատարելով «ընդ միոյ երեսուն, և ընդ միոյ վաթսուն»:

Արդ, բերկրեալ սրտով ու յարգալից գնահատանքով, Մենք Ձեզի կը շնորհենք ս. Գրիգոր Լուսատրչի Ա կարգի շքանշան, ցանկանալով, որ զայն կրէք Ձեր կուրծքին վրայ արևոտ ու խաղաղ երկար օրեր, քաջ առողջութեամբ:

Ողջ լերուք, զօրացեալ ս. Հոգով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ: Ամէն:

**Վ Ա Ջ Գ Է Ն Ա**

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 5-ն փետրուարի  
1967 փրկչական ամի,  
և ի տումարիս հայոց ՌՆԺԶ,  
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի:  
Հմր. 613»

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո, Վեհափառ Հայրապետը խոսք առնելով ջերմորեն ողջունում է հարգելի հոբելյարին և, սրտագին ծափերի տարափի տակ, պրոֆ. Ա. Առաքելյանի կուրծքը զարդարում ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ազամանդակու շքանշանով:

Հայրապետական բարձր պարգևը հուզումով ու աջահամբույրով ստանալուց հետո,

հոբելյար պրոֆ. Ա. Առաքելյանը ջերմ երախտագիտութեան ու շնորհակալութեան զգացված խոսք է ասում՝ Վեհափառ Հայրապետին ուղղված.

«Վեհափառ Տէր,

ինձ համար գերագոյն պատիվ է, որ իմ ութսունամյա հոբելյանը տոնվում է Ձերդ Սրբութեան նախագահութեամբ և հայրենի կառավարութեան ներկայացուցիչների ներկայութեամբ: Բառ չեմ գտնում արտահայտելու խորը երախտագիտութեան իմ զգացմունքը:

Վեհափառ Տե՛ր և հարգարժան հանդիսականնե՛ր, Արուժը մի փոքր գլուղ է, որ գտնվել է Արագածոտն գավառում, այժմվա Բյուրականի մոտ: Գրիգոր Մամիկոնյան հայ իշխանն աղբտեղ կառուցում է մի հոյակապ եկեղեցի: Հայ պատմիչը՝ Հովհաննես Գրասխանակերտցին, գովասանքով է նշում հայ իշխանի շինարար աշխատանքը և այսպես որակում այն. «Եւ շինեաց ստիպով երկնային իմն ճեմարան յարդարեալ ի մէջ երկրի»: Այդպիսի երկրային մի ճեմարան է Մայր Աթոռը, ս. Էջմիածինը: Այդ ճեմարանումն են անցել իմ պատանեկութեան և երիտասարդութեան տարիները, այդտեղ եմ ես ստացել իմ կրթութիւնը և դաստիարակութիւնը: Ճեմարանն ինձ տվել է գիտութիւն և ներշնչել սեր առ տառապալից հայ ժողովուրդը, առ նրա մեծ մշակույթը: Ես հավատարիմ մնացի և այժմ էլ հավատարիմ եմ մեր ժողովրդին, և քանի ողջ եմ, կշարունակեմ աշխատել հայ ժողովրդի համար, Մայր Աթոռի համար: Հայ ժողովուրդը և Մայր Աթոռը ենթակա են եղել ահեղ փոթորիկների, մրրիկների, քաղաքական արհաւիրքների. հայ ժողովուրդը և իր Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը այդ բոլորի հանդեպ մղելով բուն, հերոսական պայքար, մնացել են անհողողղ և անսասան: Մայր Աթոռն այժմ և առհավետ զերծ է արհաւիրքներից և փոթորիկներից, քանի որ գոյութիւն ունի հայրենի կառավարութիւնը, որի հովանու տակ ապրում է նա ազատ և ապահով: Փա՛ռք և պատիվ հայրենի կառավարութեան ու Մայր Աթոռ ս. Էջմիածնին, հավերժական կյանք սիրելի Հայաստանին ու նրա հարազատ կառավարութեանը: Թող հավերժ ապրի Մայր Աթոռը, հայ ժողովրդի սրտերի սիրտը»:

Փոքր ընդմիջումից հետո գործադրութեան է դրվում հոբելյանական հանդիսութեան երկրորդ բաժինը՝ հետևյալ զեղարվեստական ծրագրով, որին իրենց մասնակցութիւնն են բերում սիրված ու հարգված արվեստագետներ:

Շնորհալի դաշնակահարուհի էլյանուրա Աղամյան. ծրագրում՝ է. Մանուկյանի «Պրելյ-

ուղ» և «Էքսպրոմտ» (իր ստեղծագործությունը):

Վաստակավոր թավջութակահար պրոֆ. Գուրգեն Աղամյան, ծրագրում՝ էգրլս՝ սոնատի առաջին մաս, Բոբեր՝ Հունգարական ռայպսոդիա, Գուրգեն Աղամյան՝ էլեգիա-մեղեգի (նվիրված Վեհափառ Հայրապետին), Կոմիտաս վարդապետ՝ «էս առուն», Ալ. Հարությունյան՝ «Էքսպրոմտ»:

Այնուհետև եկեղեցական երկու հնադարյան տաղերի երգեցողությանը հանդես է գալիս հոգ. տ. Արսեն վրդ. Բերբերյանը՝ «Հատուն, հատուն» և «Ծս ձայն դադիծուն ասեմ» ս. Գրիգոր Նարեկացու խոսքերով, նոտագրված Կոմիտաս վարդապետի ձեռքով, իսկ ձայնի և երգեհոնի համար մշակված՝ երաժշտագետ պրոֆ. Ռուբեն Աթայանի կողմից, որը և դաշնամուրի վրա ընկերակցում է տաղերի կատարմանը:

Գեղարվեստական բաժնի վերջին մասում ներկաները բացառիկ հաճույք ունեցան լսելու տաղանդավոր երգչուհի, ժողովրդական

դերասանուհի Գոհար Գասպարյանին. ծրագրում՝ Գլյուկ՝ արիա, Մոցարտ՝ արիա «Տիտուս Անգրոնիկուս» օպերայից, Կրեդրի՝ սոնատին, ձայնի և սրնգի համար, Անտոն Մալիպետ՝ «Մովի երգը», Կոմիտաս վարդապետ՝ «Կանչե, կոունկ, կանչե», Արսեն Տիգրանյան՝ Շուշանի արիան «Դավիթ-բեկ» օպերայից, Տիգրան Չուխաշյան՝ Փառանձեմի՝ թագուհու արիան «Արշակ Երկրորդ» օպերայից:

Համերգի ժամանակ տաղանդավոր երգչուհուն դաշնամուրի վրա ընկերակցում էր շնորհալի դաշնակահարուհի Էլյոնորա Ոսկանյանը, իսկ սրնգի վրա՝ տաղանդավոր սրնգահար Լևոն Ալոյանը:

Հորեկյանական հանդիսության ավարտին Վեհափառ Հայրապետը շնորհակալության ջերմ խոսք ասաց հորեկյանական հանձնաժողովի անդամներին, ելույթ ունեցողներին և գեղարվեստական բաժնի իրենց սիրահոժար մասնակցությունը բերած արվեստագետներին:

